ԻՐԱՆԱՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՆԱ-ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱԿԱԹՈՒՐՔԱԿԱՆ ԴԱՇԻՆՔ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՓՈՐՁԵՐՈՒՄ (XVI—XVII դդ.)

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

1453 թ. Թուրք օսմանների կողմից Կ. Պոլսի գրավման հետևանքով արևմտյան աշխարհը զրկվում էր Արևելքի հետ ամեն տեսակի շփումներ ունենալու հնարավորությունից։ Ի վիճակի չլինելով մեն-մենակ դիմագրավելու օսմանցիների առաջխաղացմանը, եվրոպական տերությունները եռանդուն կերպով սկսում են փնտրել դաշնակիցներ՝ հակաթուրքական զինակցություն կռելու համար։ Նրանց ենթադրությամբ Օսմանյան կայսրության դեմ մղվող պայքարում Իրանը կարող էր լինել իրենց բնական դաշնակիցը։ Արևելքի և Արևմուտքի միջև միջազգային առևտրով զբաղվող իրանահայ վաճառականները, որոնց շահերը նույնպես տուժել էին Փոքր Ասիայի վրայով անցնող առևտրական ճանապարհների վրա օսմանցիների սահմանած հսկողության հետևանքով, կամովին ընդգրկվում են Իրանում իշխող Աղ-Կոյունլուների և Վենետիկի հանրապետության միջև սկզբնավորվող քաղաքական բանակցությունների ոլորտը։ Անտարակույս, դրա դրդապատճառներից էր նաև այն, որ Հայաստանի վրա ծանրորեն իշխում էր օսմանյան լուծը, և հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչները, բնականաբար, չէին կարող այդ փաստի նկատմամբ դիտողի դերում մնալ։ Մասնավորապես հայտնի է, որ 1469 թ. Ուզուն-Հասանը Իտալիա է ուղարկում լայն լիազորություններով օժտված մի դեսպանություն, որի կազմում առաջին դեմքերից էր իրանահայ մեծահարուստ վաճառական խոջա Միրաքը[1]։ Վենետիկում, ներկայանալով հանրապետության կառավարությանը, դեսպանության անդամներն առաջարկում են զինակցություն և պատվավոր դաշնակցություն կնքել Թուրքիայի և Եգիպտոսի սուլթանի դեմ, պայմանով, որ վենետիկցիները չթերանան իրենց նավատորմով հարձակվելու նրանց վրա[2]։ Խոջա Միրաքը և դեսպանության անդամներն այնուհետև մեկնում են Հռոմի պապի և Նեապոլի թագավորի մոտ, նրանց ևս առաջարկելով նույնպիսի դաշինք։ Այդ բանակցություններից հետո թեև հայտարարվեց, որ Վենետիկի հանրապետության, Նեապոլի թագավորության, Հռոմի պապի, Հունգարիայի, Աղ-Կոյունլուների պետության, Ղարամանիայի և Կիպրոսի (Լուսինյանների պետության) մասնակցությամբ ստեղծվել է հակաօսմանյան լիգա[3], սակայն այն հանդիսացավ մեռելածին մի մանուկ և մնաց միայն թղթի վրա։

1502 թ. Իրանում հիմնադրված Սեֆյան պետությունը դառնում է Մերձավոր արևելքում և Անդրկովկասում քաղաքական առաջնություն ձեռք բերելու պայքարում Թուրքիայի հիմնական ախոյանը։ Շահ Իսմայիլ I-ը իր առջև նպատակ էր դրել հսկողություն սահմանել Առաջավոր Ասիայի ստրատեգիական հանգույցների, ինչպես Հնդկաստանից ու Միջին Ասիայից դեպի լևանտյան նավահանգիստները տանող առևտրական ուղիների նկատմամբ։ Ժամանակակից Թուրք պատմաբան Խալիլ Ինալչիքը նշում է, որ «այն բոլոր ուղիները, որոնցով իրանական մետաքսը արտահանվում էր Եվրոպա, անցել էր Թուրքերի ձեռքը։ Չբավարարվելով սոսկ առևտրական ճանապարհների վրա ունեցած

---

1 Ղ. Ալիշան, Հայ-Վենետ կամ յարընչութիւնք հայոց և վենետաց ի ժգ—դ և ի ժե—ղ դարս, Վենետիկ, Ս. Ղազար, 1896, էջ 187 և այլն։

2 Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, Երևան, 1932, էջ 156։

3 Berchet, La Republika di Venezia e la Persia, Torino, 1865, p. 28.

հսկողությամբ, Թուրքերը XVI դ. փորձեր էին կատարում գրավել և իրենց տիրույթներին միացնել Հյուսիսային Իրանի մետաքս արտադրող այնպիսի կենտրոններ, ինչպիսիք էին Շիրվանը և Գիլյանը»[4]։ Գերազանցապես այս հողի վրա 1514 թ. ծայր են առնում Թուրք-իրանական պատերազմները, որոնք առանձին ընդմիջումներով շարունակվում են մոտ մեկուկես դար։ Այդ պայմաններում եվրոպական պետությունները նոր հույսեր են փայփայում իրանա-եվրոպական հակաթուրքական դաշինք կնքելու վերաբերյալ։ Հայտնի է, օրինակ, որ Վենետիկի հանրապետությունը Եվրոպա ժամանած հայ վաճառականների միջոցով տեղեկություններ էր հավաքում Իրանում հիմնադրված նոր պետության մասին։ Այսպես, երբ 1503 թ. Մուրատ Անկյուրացին Թավրիզից ժամանում է Վենետիկ, հանրապետության սենատը նրանից աշխատում է տեղեկություններ քաղել Սեֆյան պետության և նրա մղած պատերազմների վերաբերյալ[5]։ Իր հերթին Սեֆյան պետությունը հիանալի գիտակցում էր, որ դժվար է միայնակ պայքարել մի այնպիսի ահարկու թշնամու դեմ, ինչպիսին Օսմանյան կայսրությունն էր։ Այդ պատճառով այն ևս հանձինս եվրոպական պետությունների փնտրում էր դաշնակիցներ։ Այդ պետությունների հետ բանակցություններ վարելու համար սեֆյաններն ավելի հաճախ դիմում էին իրանահայ վաճառականներին[6]։ «Թուրքիայի դեմ պայքարելու համար կարիք զգալով մի շարք եվրոպական տերությունների աջակցությանը,— գրել է Ի. Պետրուշևսկին,—սեֆյաններն այդ նպատակով հաճույքով օգտվում էին քրիստոնյա դիվանագիտական գործակալների՝ հայ վաճառականների և հոգևորականների ծառայություններից»[7]։ Հայտնի է, օրինակ, որ արդեն 1506 թ. Կ. Պոլսում դատում և գլխատում են էջմիածնի նվիրակներին՝ սեֆյանների օգտին լրտեսության մեղադրանքով[8]։ Ղ. Ալիշանը բերում է բազմաթիվ փաստեր, որոնք վկայում են, որ, օրինակ, Հին Ջուղայի վաճառականները կատարում էին շահի դիվանագիտական հանձնարարությունները[9]։ Իր հերթին Վենետիկի հանրապետությունը ևս սեֆյանների հետ դիվանագիտական հարաբերություններում հաճախակի դիմում էր հայ վաճառականների ծառայություններին։ Այսպես, Վենետիկի հանրապետության արխիվային փաստաթղթերից տեղեկանում ենք, որ 1571—1572 թթ. շահ Թահմասպ I-ի մոտ ուղարկված վենետիկյան դեսպան Վինչենցո դ՝ Ալեսսանդրին իր բանակցությունների ժամանակ օգտվում էր ջուղայեցի վաճառականների աջակցությունից[10]։ Այդ վաճառականների գլխավորներից Միրիջանը և Մարութան Վենետիկի դեսպաններին հայտնում են, որ վաճառականի անվան տակ Վենետիկ են մեկնել իրենց երկու ներկայացուցիչները, որոնք ունեն գաղտնի առաքելություն։ Մասնավորապես նրանց հանձնարարված էր Վենետիկի հանրապետությանը հաղորդել, որ պարսից շահը պատրաստվում է օսմանցիների դեմ պատերազմի և որ Թուրքիայի մզկիթներում աղոթում են, որպեսզի թուրքերի և պարսիկների միջև եղած հաշտությունը[11] չխախտվի, որ-

---

4 Халил Инальджик, Международные торговые пути и Османская империя (Доклад на V международном конгрессе экономической истории в Ленинграде, М., 1970, с. 4).

5 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 204—205։

6 «Труды Азербайджанского гос. университета им. С. М. Кирова», серия историческая, вып. 1, Баку, 1950, с. 62.

7 И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—начале XIX вв., Л., 1949, с. 182.

8 Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Երևան, 1959, էջ 57։

9 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 372։

10 G Berchet, նշվ. աշխ., էջ 31, 33—34

11 Խոսքը 1555 թ. մայիսի 29-ին Ամասիայում կնքված Թուրք-իրանական հաշտության պայմանագրի մասին է։

պեսդի իրենց նավատորմը նոր փորձանքի չենթարկվի քրիստոնյաների կողմից[12]։

1576 թ. շահ Թահմասպ I-ի մահից հետո, օգտվելով Սեֆյան պետության ներսում ծայր առած ներքին խռովություններից և 1577 թ. հունվարին ավարտելով պատերազմը Հաբսբուրգների գերմանական կայսրության հետ, Թուրքիան 1578 թ. հերթական ագրեսիա ծավալեց Իրանի դեմ[13]։ Սեֆյան գահը ժառանգած նոր շահը՝ Աբբաս I-ը 1590 թ. մարտի 1-ին ստիպված էր Թուրքիայի հետ ստորագրել հաշտության ծանր պայմանագիր[14]։ Օգտվելով ձեռք բերած դադարից, շահը տենդագին նախապատրաստություններ սկսեց տեսնել՝ Թուրքիայի դեմ պատերազմ սկսելու համար։ Դա ստիպում էր նրան՝ փնտրել դաշնակիցներ։ Շահ Աբբասը նաև մտադիր էր Թուրքիային տնտեսական ծանր հարված հասցնել։ Նա ենթադրում էր դրան հասնել Իրանի արտաքին առևտրի ուղիները թուրքական ավանդական քարավանային ճանապարհներից դեպի հարավ՝ Պարսից ծոց տեղափոխելու միջոցով, որն իր ախոյանին կզրկեր մեծամեծ շահույթներից։ Իր մասշտաբներով վիթխարի այդ ծրագրի իրագործումը ևս անկարելի էր առանց Եվրոպական տերությունների աջակցության։

XVI դ. 90-ական թվականներից շահ Աբբասը սկսում է դեսպանություններ ուղարկել Եվրոպա և առաջին հերթին այն երկրները, որոնց անմիջականորեն սպառնում էր թուրքերի և նրանց վասալ Ղրիմի խանի ներխուժման վտանգը կամ որոնց շահերը մեծապես տուժել էին Արևելքի և Արևմուտքի միջև առևտրական ճանապարհների վրա թուրքերի տիրապետության հետևանքով[15]։ Ավելի հաճախակի, քան սեֆյան նախկին շահերը, Աբբաս I-ը սկսում է իրանա-եվրոպական բանակցությունների ժամանակ օգտագործել հայ բանագնացներին։ Բանն այն է, որ օսմանյան տիրապետությունն Անդրկովկասում հատկապես ծանր հետևանքներ ունեցավ միջազգային առևտրի հետ կապված հայ վաճառականության համար՝ կասեցնելով նրանց ազատ երթևեկությունը Թուրքիայի առևտրական ճանապարհների վրայով։ Հայ խոջաների դժգոհությունը կրկնապատկվում էր նաև այն պատճառով, որ շահի իշխանության օրոք «խաս» ճանաչված հայ վաճառականական քաղաքներ ու ավաններ Ջուղան, Ագուլիսը, Մեղրին, Շոռոթը, Աստապատը և այլն, որոնք ունեին մի շարք արտոնություններ ու իրավունքներ, Թուրքիայի կողմից զրկվեցին դրանցից։ Բնականաբար, այս պայմաններում հայ վաճառականությունը որոշակի հույսեր էր կապելու հակաթուրքական դաշինք կնքելու փորձերի հետ՝ աշխատելով իր լուման ներդնել այդ գործում։ Այսպես, 1597 թ. որպես էջմիածնի նվիրակ, իրականում որպես շահի դիվանագիտական հանձնակատար, Եվրոպա է ուղևորվում Հակոբ Մարգարյան Ամդեցին։ Թե ինչպիսի լիազորություններով էր նա օժտված, հայտնի չէ, սակայն աղբյուրներից երևում է, որ նրա առաքելությունը խիստ գաղտնի էր։ 1597 թ. հունիսի 22 և 23-ին Վենետիկի հանրապետության իշխանությունների կողմից հարցաքննության ժամանակ նա հայտնում է, որ իրեն Եվրոպա է ուղարկել շահ Աբբասը և որ Իրանից մեկնելուց հետո եղել է վրաց Ալեքսանդր և Սիմոն իշխանների մոտ, որոնք իրեն նամակներ են տվել ուղղված Հռոմի պապին ու «առ դեսպան կայսերն ի Հռոմ», և որ ինքը «թղթեր» ունի նաև վրաց պատրիարքից։ Չխոսելով այդ «թղթերի» բովանդակության մասին, Հակոբ Ամդեցին միայն ասում է, թե իր խնդիրն է դրանք հանձնել հասցեատե-

---

12 Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 386։

13 K. Bayani, Les relations de l'Iran avec l'Europe occidentale à l'époque Safavide, Portugal, Espagn, Angleterre, Holland et France (avec le document inédit), Paris, 1937, p. 7.

14 Н. В. Пигулевская, А. Ю. Якубовский и др., История Ирана с древнейших времен до конца XVIII века, Л., 1958, с. 272.

15 نصر الله فلسفی، زندگانی شاه عباس اول، ٤-١ ج، تهران، ١٩٦٢-١٩٥٢

բերին և սպասել պատասխանի։ Ընդ որում, նա չի թաքցնում, որ «ուրիշ անգամ այլ ասունցմէ և Սանդա Սեւերինայի կարդինալեն թուղթեր տարած եմ առ Շահն և առ իշխանս և պատրիարքն վրաց»[16]։ Հակոբ Ամդեցին նաև հայտնում է, որ իրեն նմանակ հանձնած վերոհիշյալ անձինք աղաչեցին, որ պապը «աղոթք ընէ՝ որ կարենան թշնամւոյն դէմ երթալ. միանգամայն և կու սպասեն՝ որ աբեմբտեայք նախ յաղթութիւն մի ընեն, որ իրենք այլ վստահանան»[17]։

1599 թ. հուլիսի 9-ին շահ Աբբասը Եվրոպա ուղարկեց Հուսեյին Ալի-բեկ Բայաթի դեսպանությունը, որին ուղեկցում էր անգլիացի Անտոնի Շիրլին։ Դեսպանությունն ավարտվեց կատարյալ ձախողմամբ[18]։ Դա ճնշող տպավորություն գործեց շահի վրա և նրան ստիպեց այնուհետև եվրոպական երկրների հետ բանավարություններում ավելի հաճախակի օգտվել հայ վաճառականների և հոգևորականության ծառայություններից։ 1593—1606 թթ. թուրք-ավստրիական պատերազմի շրջանում Իրանի և եվրոպական տերությունների միջև աշխույժ բանակցություններ էին տեղի ունենում։ Շահ Աբբասը 1600—1604 թթ. Եվրոպա ուղարկեց մի քանի դեսպանություն[19]։ 1603 թ. Վենետիկ ուղարկված դեսպանության կազմում կային երեք նորշուղայեցի հայ վաճառականներ[20]։

1603 թ. սեպտեմբերի 14-ին, օգտվելով Թուրքիայի թուլացումից ու ներքին վիճակի անկայունությունից, շահ Աբբաս I-ը պատերազմ սկսեց նրա դեմ։ Թեև այս պատերազմում առաջին անգամ էին սեֆյանները հարձակվում, իսկ թուրքերը պաշտպանվում[21], սակայն շահը շարունակում էր դաշնակիցներ փնտրել[22]։ Պատերազմի պայմաններում Եվրոպա դեսպանություններ ուղարկելը խիստ դժվարացել էր, որովհետև թուրքական իշխանությունները ձերբակալում և մահապատժի էին ենթարկում դեսպանությունների անդամներին[23]։ Այս պարագաներում շահը գերադասում էր օգտագործել անհատ դիվանագիտական հանձնակատարների, առավելապես ազգությամբ հայ, որոնք վաճառականի անվան տակ կարող էին անցնել Թուրքիայի տարածքի վրայով։ Այսպես, հայտնի է, որ 1607 թ. շահը Եվրոպա է ուղարկում նորշուղայեցի վաճառական խոջա Շիոշին, որին հանձնարարված էր Վենետիկի դոժին հանձնել շահ Աբբասի նամակը։ Այնտեղ շահը մասնավորապես ասում էր, որ ինքը պատերազմ է մղում Թուրքիայի դեմ և ցանկալի է համարում, որ եվրոպական պետությունները ևս իր հետ համատեղ հանդես գան «ընդհանուր թշնամու» դեմ[24]։ Մեծ դժվարություններով ու արկածներով հասնելով Վենետիկ, 1610 թ. հունվարի 16-ին Շիոշը ներկայանում է դոժին ու հանրապետության սենատին և հանձնում շահի հավատարմագրերն ու նամակները։ Դժբախտաբար խոջա Շիոշի առաքելության մասին մեզ հայտնի աղբյուրները ոչ մի տեղեկություն չեն պարունակում։ Սակայն ակնհայտ է, որ շահը լիովին վստահում էր նրան, քանի որ դա առաջին դեպքն էր, որ նա առանց պարսիկ աստիճանավորների ուղեկցության նման առաքելությամբ Եվրոպա էր ուղարկում հայի։

Զրկվելով եվրոպական երկրների հետ առևտուր ծավալելու հնարավորությունից, հայ վաճառականները ստիպված էին օգտվել հարավի՝ Պարսից ծոցի

---

16 Ղ. Ալիշան, Հայ-Վենետ, էջ 353—354։

17 Նույն տեղում։

18 كاظم صدر، تاريخ سياست خارجى ايران، تهران، ۱۹۴۳، ص ۵۸

19 A. Gouvea, Histoire orientale des grandes progrès de l'Eglise catholique, Bruxelles, 1609, p. 10—11.

20 G. Berchet, Նշվ. աշխ., էջ 44, 47, 192, 195, 214.

21 Hekmat Mohammad Ali, Essai sur l histoire des relations politiques irano-ottomanes de 1722—1747, Paris, 1937, p. 34.

22 П. П. Бушев, История посольств и дипломатических отношений русского и иранского государств в 1586—1612 гг., М., 1976, с. 383.

23 G. Berchet, Նշվ. աշխ., էջ 47։

24 Նույն տեղում, էջ 200—201։

դեռ լիովին չյուրացված առևտրական ուղուց[25], որտեղ, սակայն, պորտուգալական իշխանություններն էլ իրենց հերթին արհեստական արգելքներ էին ստեղծում հայ վաճառականների առջև, գանձելով բարձր մաքսատուրքեր և թույլ չտալով, որ նրանք Որմուզում առևտուր անեն օտարերկրյա վաճառականների հետ։ Այդ է պատճառը, որ ջուղայեցի խոջաների պնդմամբ, հավանական է նաև շահական կառավարության թելադրանքով, էջմիածնի կաթողիկոս Մելիքսեթը դիմում էր իսպանական թագավորին. «Զի յանուանի շահաստանի անդ յՈրմուզ, որ ի Պարսից ծոցին կայ, յորում յայլոց քրիստոնեայ վաճառականաց վասն տուրևառիկ վաճառաց մտիցն և ելիցն ի սակ տասանորդի հայն պահանջին, ի նոցունց Հայոց նոյն սակ կրկին չափով որպէս յանհաւատիցն պահանջի, ի մեծ վնաս նոցին և իրաց և համբաւոյ»[26]։ Դարձյալ հայ վաճառականների խնդրանքով քարմելիթյան միաբանները դիմել էին Հռոմի պապին, իրնդրելով ճնշում գործադրել իսպանական թագավորի վրա, որպեսզի վերջինս արգելի Որմուզում պորտուգալացիների վայրագությունները հայ վաճառականների նկատմամբ[27]։ Անտարակույս միսիոներների այս ծառայությունը կատարվում էր այն հաշվով, որ փոխարենը հայ վաճառականները նպաստեին Իրանի հայ բնակչության շրջանում կաթոլիկ քարոզչությունը առաջ տանելու գործին։ Այդ նույն միտումով նրանք նույնիսկ Որմուզում փրկագնեցին ստրկության դատապարտված 12 հայ պատանիների, պորտուգալացի ստրկավաճառներին վճարելով 150 սկուդի[28]։

Հայերի նկատմամբ պորտուգալացիների վերաբերմունքը մեծ դժգոհություն էր ընդունում Սեֆյան կառավարությունը։ Այս հողի վրա XVII դ. սկզբին իրանա-պորտուգալական հարաբերությունները ծայրահեղորեն սրվել էին[29]։ Դրանից փորձում էր օգտվել Անգլիան՝ Պարսից ծոցում հիմնավորվելու և այնտեղից պորտուգալացիներին ու իսպանացիներին դուրս մղելու համար։ Վախենալով դրանից, 1607 թ. Իսպանիայի թագավոր Ֆիլիպ III-ը Իրան ուղարկեց իր դեսպան Անտոնիո դե Գուվեային։ Շահին ուղղված ուղերձում Ֆիլիպ III-ը հարց էր բարձրացնում իսպանա-իրանական հակաթուրքական դաշինք կնքելու վերաբերյալ[30], միաժամանակ նշելով, որ Միջերկրական ծովում գործող իր ռազմական նավատորմը պատրաստ է ջախջախիչ հարված հասցնելու թուրքերին[31]։ Ֆիլիպ III-ի առաջարկությունը Սեֆյան արքունիքում մեծ հետաքրքրությամբ ընդունվեց։ Աբբաս I-ը անմիջապես կազմեց մի դեսպանություն՝ նրան լիազորելով իր անունից բանակցություններ վարելու իսպանական թագավորի հետ։ Դե Գուվեայի դեսպանության կազմում, որը Սպահանից մեկնեց 1608 թ., ընդգրկվեցին նաև իրանական ատիճանավոր Դենգիզ բեկ Կուրչի Ռումլուն և նորջուղայեցի հայ վաճառական խոջա Սաֆարը[32]։ Քանի որ դեսպանությունը Իսպանիա էր մեկնելու Պարսից ծոցով, շահը խոջա Սաֆարին տրամադրեց 50 հակ հում մետաքս, որպեսզի դրանով իսկ սկիզբ դրվի մետաքսի արտահանման նոր ճանապարհին[33]։ Խոջա Սաֆարը նորջուղայեցի խո-

---

[25] ابوالقاسم ...حاب، تاریخ زندگانی شاه عباس کبیر، بخش اول، تهران، ۱۳۲۵، ص ۱۳۰

[26] «Հանդես ամսօրյա», 1934, էջ 238։

[27] "A chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVII and XVIII centuries", vol. I london, 1939, p. 141.

[28] Նույն տեղում, էջ 207։

[29] Charles de Lannoy et Van der Linden Histoire de léxpansion coloniale des peuples Européens, t. II, Bruxelles, 1907, p. 64.

[30] A. de Gouvea, Relation de grandes guerres et victoires par le roi de Perse de Chah-Abbas, contre les empereurs de Turquie Mahomet et Ahmet, à son fils, Rouen, 1646. p. 414—417.

[31] احمد تاج بخش Նշվ. աշխ., էջ 115—116։

[32] نصرالله فلسفی Նշվ. աշխ., հ. 1, էջ 40։

[33] Նույն տեղում, հ. 3, էջ 220։

շոր վաճառական Եդիգարի որդին էր և մանկուց կապված էր շահական արքունիքի հետ[34]։ Նա շահական ապրանքների վաճառքով զբաղվող արքունի «խասսե-յե շարիֆեա» վաճառական էր և միաժամանակ շահի խորհրդականը՝ հում մետաքսի վաճառահանման հարցերով[35]։ Դե Գուվեայի դեսպանության մասին փաստաթղթերում խոջա Սաֆարը մղված էր առաջին պլան։ Նրա մոտ էին գտնվում Հռոմի պապին, իսպանական թագավորին, Իտալիայում քարմելիթյան միաբանության անդամներին, թոսկանական մեծ դքսին և Վենետիկի դոժին հասցեագրված շահ Աբբաս I-ի պաշտոնական նամակները և շահական հավատարմագրերը։ Այն, որ դեսպանության մեջ նա շահի վստահված անձն էր, երևում է նաև նրանից, որ շահին ուղղված եվրոպական միապետների պատասխան նամակներում որպես դեսպան հիշատակվում է միայն խոջա Սաֆարը։ Վենետիկի դոժին ուղղված 1609 թ. սեպտեմբերի 2-ի թվակիր նամակում Հալեպում վենետիկյան հյուպատոս Ջիովաննի Ֆրանչեսկո Սագրեդոն խնդրում էր ուշադրության նշաններ ցուցաբերել խոջա Սաֆարի նկատմամբ, նշելով, որ դրանով նա կդրսևորի իր բարեկամությունը շահ Աբբասի նկատմամբ[36]։

Իսպանիայում Դենգիզ բեկի և խոջա Սաֆարի միջև սուր հակասություններ են առաջանում. Անտոնիո դե Գուվեան Դենգիզ բեկին համոզում է խոջա Սաֆարից բռնագրավել հիսուն հակ հում մետաքսը և այն շահի անունից նվիրել իսպանական թագավորին։ Ի նշան բողոքի Սաֆարը բաժանվում է դեսպանությունից։ Ի դեպ, Իրան վերադառնալուց հետո այդ մասին նա զեկուցում է շահին և երբ Դենգիզ բեկը Եվրոպայից վերադառնում է Իրան, նրան անմիջապես ձերբակալում են և դատապարտում մահվան[37]։

Իսպանիայում բանակցությունների ձախողումից հետո խոջա Սաֆարը մեկնում է Վենետիկ։ Նա 1610 թ. ներկայանում է դոժին, նրան հանձնում շահի նամակը և նրա համար ստանում պատասխան նամակ, որտեղ դոժը նշում էր, որ խոջա Սաֆարի ժամանումը «միանգամայն ցանկալի ու կարևոր է Վենետիկի և Իրանի միջև բարեկամական հարաբերություններ հաստատելու տեսակետից»[38]։ Դոժը սակայն նախազգուշական նպատակներով խուսափում էր իր նամակում քաղաքական բնույթի հարցեր արծարծել. նա միայն նամակում շահին համոզում էր շարունակել պայքարը «ընդհանուր թշնամու»՝ այսինքն Օսմանյան Թուրքիայի դեմ։ Այս խնդրի շուրջը մանրամասնությունները նա բանավոր հայտնում էր խոջա Սաֆարին, որպեսզի վերջինս դրանք հաղորդեր շահին։

Ինչ վերաբերում է Վենետիկում խոջա Սաֆարի վարած իրանա-եվրոպական առևտրական հարաբերություններին նվիրված բանակցություններին, ապա դրանք ավարտվում են հաջողությամբ։ Հենվելով Վենետիկի արխիվներում պահվող փաստաթղթերի վրա, Ղ. Ալիշանը նշում է, որ խոջա Սաֆարի բանակցություններից հետո Նոր Ջուղայի վաճառականների այցելությունները Վենետիկ նկատելիորեն հաճախակի են դառնում. զգալիորեն մեծանում է նաև նրանց ապրանքափոխանակությունը Վենետիկի հանրապետության հետ[39]։

Հակաթուրքական դաշինք կնքելու նպատակով խոջա Սաֆարը բանակցություններ է վարում նաև Հռոմի պապի, թոսկանական մեծ դուքս Կոզմա II-ի և Միլանում քարմելիթյան միաբանության անդամ կարդինալ Ֆ. Բորրոմեյի հետ. իր առաքելությունն ավարտելուց հետո նա կրկին մեկնում է Իսպանիա և այն-

---

[34] G. Berchet, նշվ. աշխ., էջ 203 տե՛ս նաև Պ. Լ. Զեքիյան, Խոջա Սաֆար՝ Շահ Աբբասի դեսպան Վենետիկի մեջ («Պատմա-բանասիրական հանդես», 1983, №1, էջ 111).

[35] نورصادق حسين،اصفهان،تهران،١٩٣٨،ص٤٠

[36] G. Berchet նշվ. աշխ., էջ 201—203։

[37] K. Bayani նշվ. աշխ., էջ 70։

[38] نصرالله فلسفى նշվ. աշխ., հ. 3, էջ 311։

[39] Ղ. Ալիշան, Սիսական, էջ 419։

տեղից 1619 թ. ծովային ճանապարհով ուղևորվում Հնդկաստան՝ Իրան անցնելու համար։

1609—1612 թթ. ընթացքում շահ Աբբաս I-ը դեսպանություններ չի ուղարկում Եվրոպա, ըստ երևույթին սպասելով իր նախորդ պատվիրակների ձեռք բերած արդյունքներին։ Թերևս բացառություն է կազմում 1611 թ. վերջին քարմելիթյան միաբանության անդամ Թադդեուսի դեսպանությունը Հռոմի պապի մոտ[40]։ Նրան ուղեկցում էին երկու հայ վաճառականներ և մեկ հոգևորական։ Դեսպանությանը հանձնարարված էր նախ այցելել Ռուսաստան և Լեհաստան, համոզել նրանց թագավորներին Իրանի հետ համատեղ պայքար մղելու Թուրքերի դեմ և բացի այդ դադարեցնելու Թուրքիայի վրայով պարսկական մետաքսի և մյուս ապրանքների ներմուծումն իրենց երկրները։ Թադդեուսի դեսպանությունը Դերբենդի վրայով ժամանում է Աստրախան։ Ենթադրելով, որ կաթոլիկ կրոնավորը Մոսկվա է ուղևորվում շարամիտ դիտավորությամբ, Աստրախանի վոյեվոդ Ի. Խվորոստինինը բանտարկում է դեսպանության անդամներին։ Բանտարկության երրորդ տարվա վերջին հայ վաճառականներին հաջողվում է փախչել և եղելության մասին պատմել շահ Աբբասին։ Վերջինս անմիջապես վոյեվոդից պահանջում է վերադարձնել դեսպանությունը, հակառակ դեպքում սպառնալով մի ամբողջ բանակով հայտնվել Աստրախանում՝ նրան փրկելու համար։ Այդ ժամանակ Աստրախանում գտնվող Մարինա Մնիշեկի միջնորդությամբ Թադդեուսը և նրա ուղեկիցները ազատվում են և 1614 թ. վերադառնում Սպահան[41]։

Չնայած Սեֆյան Իրանի գործադրած բազմաթիվ ջանքերին, XVII դ. առաջին քառորդում իրանա-եվրոպական հակաթուրքական դաշինք կնքելու բազում փորձերը դրական արդյունք չտվեցին։ Դրա պատճառները բազմաթիվ էին։ Նախ, Եվրոպայում առկա քաղաքական և կրոնական խոր ճգնաժամը և պետությունների միջև գոյություն ունեցող սուր հակասությունները նման դաշինք կնքելու հավանականությունը հավասարեցնում էին զրոյի։ Թեպետ եվրոպական երկրների վրա կախված էր Թուրքական ներխուժման վտանգը, այդ պետությունները սակայն ի վիճակի չեղան միավորվելու և հակահարված կազմակերպելու։ Ավելին. այն ժամանակվա առևտրական խոշոր պետությունները՝ Իսպանիան, Ֆրանսիան, Հոլանդիան, Անգլիան և մյուսները, իրենց առևտրական շահերից ելնելով ոչ միայն չցանկացան միավորվել և հակահարված տալ Թուրքերին, այլև նկատի ունենալով, որ այդ առևտուրն ամբողջապես կախում ունի նրանցից, շատ հաճախ իրենց մերձավորարևելյան քաղաքականության մեջ դրսևորում էին Թուրքամետ ձգտումներ[42]։ Միանգամայն ակնհայտ էր նաև, որ Հռոմի պապերը՝ Ինոկենտիոս IV-ը, Գրիգոր IX-ը, Ինոկենտիոս VIII-ը և Ալեքսանդր VI-ը, որոնք խոսքով խաչակրության կոչ էին անում Արևելքի քրիստոնյաներին անհավատների լծից ազատագրելու ուղղությամբ, նույնպես խուսափում էին կատարելու գործնական քայլեր[43]։ Վերջապես XVII դ. սկզբին արևմտյան տերությունների քաղաքականությունը հանդում էր նրան, որ Թուրքիրանական երկարատև պատերազմի միջոցով նախ Թուրքերի ուշադրությունը շեղեն եվրոպական գործերից և ապա՝ Օսմանյան կայսրությունը թուլացնեն Ասիայի երկրների ու առաջին հերթին Իրանի ռազմական ուժերի օգնությամբ[44]։

Թուրքիայի դեմ իրանա-եվրոպական կոալիցիա վիճակված չէր ստեղծվելու նաև հետագայում։ 1639 թ. կնքված Թուրք-իրանական խաղաղության պայմանագիրը զրեթե մի ամբողջ դար չխախտվեց։ Այդ պայմանագրի ստորագրումից հետո եվրոպական պետությունների հետ հակաթուրքական դաշինք

---

40 "A chronicle of the Carmelites .., I, p. 72.

41 Նույն տեղում, էջ 194—197։

42 И. А. Смирнов, Россия и Турция в XVI и XVII вв., М., 1946, с. 14.

43 Ա. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 56։

44 М. Г. Панахиян, О режиме капитуляций в Иране (1568—1715) (автореферат канд. диссертации, М., 1962, с. 4).

կնքելու անհրաժեշտությունը միաժամանակ վերանում էր։ Այս շրջանում իրանա-եվրոպական հակաթուրքական դաշինք կնքելու խնդրում մեծ շահագրգռվածություն էին դրսևորում եվրոպական պետությունները։ Դա պայմանավորված էր նրանով, որ 1645 թ. սկսած Թուրքիան անընդհատ պատերազմներ էր մղում նրանց դեմ։ Եվրոպական տերությունները ստիպված 1684 թ. ստեղծեցին «Սրբազան լիգան», որի կազմի մեջ մտան Ավստրիան, Լեհաստանը և Վենետիկը։ 1684 թ. նրան միացավ նաև Ռուսաստանը[45]։

Դեռ 1663 թ. հրապարակ է գալիս ֆրանսիացի նշանավոր մարշալ Տյուրենի ծրագիրը, որտեղ Լյուդովիկոս XIV-ին կոչ էր արվում արշավանք սկսել թուրքական սուլթանի դեմ։ Հատկանշական է, որ այդ ծրագրում նախատեսվում էր Եվրոպական քրիստոնյա պետությունների հետ հակաթուրքական կոալիցիայի մասնակից դարձնել Իրանին[46]։ Ոգևորված այս ծրագրով՝ 1672 թ. արևմտահայ խոջա Մահտեսի Մուրատը Փարիզում Լյուդովիկոս XIV-ի մոտ ունկնդրության ժամանակ ասում էր, որ արևմտահայերի ղեկավարները կապեր են հաստատել «պարսկական սահմանակից նահանգների կառավարիչների հետ» այն հաշվով, որ «Շահը սուլթանի հայտնի թշնամին է և միայն նպաստավոր առիթի է սպասում նրա դեմ պատերազմը վերսկսելու համար. այնպես որ, երբ քրիստոնեական զորքերը կմոտենան ու կհարձակվեն Արշիպելագի և Կիպրոսի ծովի ափերի վրա, և այն ժամանակ, երբ Ձեր վեհափառության բանակները կը-գրավեն Կ. Պոլիսը՝ մինչև մոսկովցիները կհարձակվեն Տրապիզոնի վրա, պարսիկները կներխուժեն Բաղդադի կողմից»[47]։ Սակայն Մահտեսի Մուրատը չէր կարող կռահել, որ ֆրանսիական դիվանագիտությանը Օսմանյան կայսրության գոյությունը անհրաժեշտ էր Եվրոպայում հավասարակշռությունը պահպանելու համար, և որ ֆրանս-թուրքական բարեկամությունը մի լծակ է, որի օգնությամբ մի կողմից ապահովվելու էր ֆրանսիական գերակշռությունը Մերձավոր արևելքում, մյուս կողմից՝ թուլացվելու էին Ֆրանսիայի ախոյան Ավստրիայի դիրքերը[48]։

XVII դ. 60—70-ական թվականներին եվրոպական պետությունների կողմից Իրանը հակաթուրքական դաշինքի մեջ ընդգրկելու բանակցությունների մեջ նախկինի պես գործոն դեր էին կատարում հայերը։ Այսպես, Առաքել Շոռոթեցի «Բորիկ» կոչված հայ կաթոլիկ վարդապետը 1662 թ. հունիսի 10-ին Վենետիկի դոժին ուղղած գրության մեջ առաջարկում էր իր միջոցով բանակցություններ սկսել Իրանի հետ՝ Թուրքիայի դեմ դաշինք կնքելու համար։ Ի պատասխան դրա, Վենետիկի սենատի անունից շահի հասցեով տրվում են հանձնարարական նամակներ[49]։ 1668 թ. Նախիջևանի կաթոլիկ համայնքի արքեպիսկոպոս Մատթեոս Հովհաննիսյանցու և կաթոլիկ Պետրոս Պետիկի միջոցով Կղեմես IX պապը և Վենետիկի հանրապետությունը սեֆյան կառավարությանն առաջարկում են մասնակցել Թուրքիայի դեմ Վենետիկի մղած պատերազմին[50]։ Սակայն մինչև Մատթեոսի և Պետիկի Իրան հասնելը, 1669 թ. պատերազմն ավարտվեց վենետիկցիների կապիտուլյացիայով։

Այդ նույն ժամանակ Իրանը հակաթուրքական ռազմական դաշինքի մեջ ներգրավելու առաքելությամբ Հռոմի պապը Իրան է ուղարկում Հռոմում կրթություն ստացած հայ դոմինիկյաններ Ազարիա Հովհաննիսյան Ջահկեցուն և Անտոն Նազարյան Ապրակունիսեցուն, որոնցից առաջինին Հռոմում անվա-

---

45 J. W. Zinkeizen, Geschichte des Osmanischen Reiches in Europa, B. V, Gotha, 1856, S. 87.

46 T. G. Djuvara, Cen projets de partage de la Turquie, (1281—1913), Paris, 1914, p. 215—220.

47 Հ. Ս. Անասյան, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1961, էջ 92—93։

48 Th. Lavalée, Histoire de l'Empire Ottoman, Paris, 1855, p. 324.

49 G. Berchet, Նշվ. աշխ., էջ 23։

50 Նույն տեղում, վավ. № 54—59։

նում էին Մարիա դի-Սան-Ջովաննի, իսկ երկրորդին՝ Անտոնիո դի-Սան-Նազարո։ 1669 թ. շահ Սուլեյմանն ընդունում է պապի այս դեսպաններին և խոստանում Թուրքիայի դեմ պատերազմի մեջ մտնել եվրոպական «դաշնակիցների» կողմից պատերազմական գործողություններ սկսելուց տասը օր հետո[51]։ Երբ 1673 թ. հունիսին թուրքերը ստորագրեցին Ֆրանսիային հատկացվող նոր կապիտուլյացիաներ, վերջինս դուրս եկավ այն պետությունների շարքից, որոնք շահագրգռված էին ռազմական ճակատ կազմելու Թուրքիայի դեմ։ Այսուհետև Ավստրիան էր դառնում այն կենտրոնը, որտեղ արծարծվում էին ռազմական ուժով «թուրքական վտանգը» վերացնելու հարցերը։ Այս շրջանում աճում էր հայ առևտրականների քաղաքական տրամադրությունն ընդդեմ Թուրքիայի և թեքվում վերջինիս դեմ պայքարող եվրոպական պետությունների և, առաջին հերթին, Ռուսաստանի կողմը[52]։ Հայտնի է, որ 1666 թ. որպես իրանական պետության բանագնաց Մոսկվայում իրանա-ռուսական հակաթուրքական դաշինք կնքելու հարցի շուրջ բանակցություններ էր վարում Նոր Ջուղայի առևտրական ընկերության ներկայացուցիչ Գրիգոր Լուսիկենցը։ Այդ նույն խնդրի կապակցությամբ 1668 թ. ցարի հանձնարարությամբ Մոսկվայից Սպահան է մեկնում Նոր Ջուղայի հայկական առևտրական ընկերության Մոսկվայի ներկայացուցիչ անգլիացի Թոմաս Բրայնը[53]։ Նույն թվականին Իրան է ժամանում նաև լեհական դեսպան հայազգի Բոգդան Գուրդին, որը Գրիգոր Լուսիկենցի հետ համատեղ ձգտում էր կազմակերպել Ռուսաստանի, Լեհաստանի և Իրանի ռազմական բլոկ՝ ընդդեմ Թուրքիայի։ Սպահանում լեհական դեսպանը հայտնում էր, որ թուրքերը շուտով ռազմական գործողություններ են սկսելու Իրանի դեմ։ Հատկանշական է, որ ահաբեկված շահն անմիջապես պալատ է կանչում Լուսիկենցին և հարցնում նրան, թե արդյոք ճիշտ է, որ ռուսական ցարը հաշտություն է կնքել լեհերի հետ և ի վիճակի է արդյոք նա դիմակայելու թուրքերին[54]։ Այս հարցմանը Լուսիկենցն անվարան պատասխանում է, որ եթե Ռուսաստանը Լեհաստանի հետ համատեղ հանդես գա թուրքերի դեմ, վերջիններս կջախջախվեն[55]։

Երկրորդ անգամ Գրիգոր Լուսիկենցը Մոսկվա է ժամանում 1671 թ.։ Դեսպանական պրիկազին նա հայտնում է, թե ինքն ունի «ծածուկ արդ»՝ գաղտնի ասելիք։ Ընդ որում, նա հրաժարվում է գրավոր հայտնել իր ասելիքը, պատճառաբանելով, որ դա կարող է հայտնի դառնալ շահին և առիթ տալ, որ նա պատժի իրեն[56]։ Այս հանգամանքը գալիս է հաստատելու, որ շատ հաճախ հայ գործիչները փորձում էին Թուրքիայի դեմ Իրանի և եվրոպական պետությունների քաղաքական դաշինք ստեղծել, այդ առիթով չունենալով շահի համապատասխան լիազորությունը, նկատի ունենալով բացառապես հայ առևտրական կապիտալի շահերը։ Դրանով պետք է բացատրել այն իրողությունը, որ հաճախ իրանահայ խոջաներն այդ գաղափարի իրագործման համար չէին խնայում նաև իրենց դրամական միջոցները։ Այսպես, Նոր Ջուղայում գործող կաթոլիկ միսիոներ Ֆրա Էլիասը հաղորդում էր, որ տեղի հայ կաթոլիկ համայնքի ղեկավար Մարգար Շահրիմանյանը 1693 թ. Իրանի և Վենետիկի միջև բանակցություններ էր վարում հակաթուրքական ռազմական դաշինք կնքելու վերաբերյալ։ Այդ բանակցությունների ժամանակ նա նույնիսկ 200000 դուկատ գումարով փոխառություն հատկացրեց Վենետիկի հանրապետությանը՝ Թուրքիայի դեմ պատերազմ մղելու համար[57]։

Առանձին փաստեր վկայում են նաև այն մասին, որ XVII դ. հայ իրակա-

---

51 Ղ. Ալիշան, Սիսական, էջ 96։

52 Ա. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 445։

53 Նույն տեղում, էջ 482։

54 «Армяно-русские отношения в XVII в. Сборник документов, т. I, Ереван, 1953, с. 77.

55 Նույն տեղում, էջ 78։

56 Նույն տեղում, էջ 78—79։

57 "A chronicle of the Carmelites..., I, p. 438.

նության մեջ իրանա-եվրոպական հակաթուրքական դաշինքի կնքումը դիտվում էր որպես մի քայլ, որը կարող էր նպաստել օսմանյան լծից հայ ժողովրդի ազատագրմանը։ Այդ առթիվ ակադեմիկոս Աշ. Հովհաննիսյանը նշում է, որ «Պետիկի պատկերացմամբ հայ ազատագրական շարժման սուր ծայրն ուղղված էր Թուրքիայի դեմ»[58]։

Այսպիսով, միանգամայն ակնհայտ է, որ Իրանի և եվրոպական տերությունների միջև հակաթուրքական դաշինք կնքելու հարցում, ստանձնելով միջնորդի և դիվանագիտական հանձնակատարի դեր, հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչներն առաջնորդվում էին ոչ միայն իրենց առևտրատնտեսական շահերով, այլև հետապնդում էին նաև քաղաքական շահեր, մասնավորապես օսմանյան լծից Հայաստանի ազատագրման նպատակներ։

УЧАСТИЕ ИРАНСКИХ АРМЯН В ПОПЫТКАХ СОЗДАНИЯ ИРАНО-ЕВРОПЕЙСКОГО АНТИТУРЕЦКОГО СОЮЗА (XVI—XVII вв.)

ВАГАН БАЙБУРТЯН

Резюме

В результате завоевания турками-османами Константинополя торговые пути из Европы в Азию и из Средиземноморья к Черному морю попали под контроль турецких завоевателей, неустанно стремившихся продвинуться дальше как в Европе, так и в Азии. Будучи не в состоянии без союзников воевать с таким сильным и грозным врагом, как Османская империя, иранские шахи в XVI—XVII вв. настойчиво изыскивали в Европе союзников для развертывания борьбы с Турцией. В переговорах по этому вопросу со странами Запада активное участие принимали иранские армяне—преимущественно крупные купцы, занимавшиеся международной торговлей между Востоком и Западом.

58 Ա. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 197։